

Luys Lnyju®



ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ
ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Proj

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2027-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
2. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ.....	2
3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	8
4. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ.....	16
5. ԱՄՓՈՓՈՒՄ	19

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	ՀՀ Ազգային ժողով
ԱՄՀ	Արժույթի Միջազգային Հիմնադրամ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԿԲ	ՀՀ կենտրոնական բանկ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	համախառն ներքին արդյունք
ՄԺԾԾ, ՄԺԾ ծրագիր	միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՎԿ	ՀՀ վիճակագրական կոմիտե
ՏՏ	տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՖՆ	ՀՀ ֆինանսների նախարարություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարի, համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, կազմում և հաստատում է առաջիկա երեք տարիների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետև՝ ՄԺԾԾ կամ ՄԺԾ ծրագիր), որն այնուհետև ուղարկվում է Ազգային ժողով և հրապարակվում է: ՄԺԾԾ-ով ամրագրվում են կառավարության առաջիկա երեք տարիների հարկաբյուջետային և ծախսային քաղաքականությունների հիմնական ուղղությունները, նպատակներն ու սկզբունքները: Ավելին, դրա՝ առաջին տարվան առնչվող մասը, ըստ էության, հաջորդ տարվա պետական բյուջեի նախնական նախագիծն է: Բացի այդ, ՄԺԾԾ-ում արտացոլվում են կառավարության՝ տնտեսության զարգացումների վերաբերյալ սպասումները:

«Լույս» հիմնադրամը, կարևորելով ՄԺԾԾ-ի նշանակությունը, յուրաքանչյուր տարվա Ծրագրի հաստատումից հետո դրա վերաբերյալ հրապարակում է վերլուծական տեղեկանք¹:

Սույն տեղեկանքը վերաբերում է օրերս հաստատված 2027-2029թթ. ՄԺԾԾ-ին² (այսուհետև՝ նաև Ծրագիր): Տեղեկանքում նախ ներկայացված են Ծրագրի հիմքում ընկած մակրոտնտեսական կանխատեսումները, այնուհետև հարկաբյուջետային քաղաքականության՝ առաջիկա երեք տարիների համար պլանավորվող հիմնական ուղղությունները և կանխատեսվող հարկաբյուջետային շրջանակը, այդ թվում՝ պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը: Հաջորդիվ, առանձին բաժնով ներկայացված են նաև 2027-2029թթ. ՄԺԾԾ-ում դիտարկվող մակրոտնտեսական ու հարկաբյուջետային ռիսկերը: Տեղեկանքն ավարտվում է կարևոր արդյունքների ու եզրահանգումների ամփոփմամբ: Տեղեկանքում բավական մեծ տեղ է հատկացված նախորդ (2026-2028թթ.) ՄԺԾԾ-ի հետ համեմատությանը՝ նպատակ ունենալով գնահատել կանխատեսվող ցուցանիշների փոփոխությունները և դրա արդյունքում կատարել եզրահանգումներ կառավարության սպասումների և հարկաբյուջետային քաղաքականության շեշտադրումների վերանայումների վերաբերյալ: Ընդհանրապես, տեղեկանքի նպատակը ոչ թե այլընտրանքային սցենարների ներկայացումն է, այլ կառավարության կանխատեսումների իրատեսականության

¹ «Լույս» հիմնադրամի՝ ՄԺԾԾ-ի վերաբերյալ նախորդ վերլուծություններին կարելի է ծանոթանալ այստեղ՝ <https://www.lsys.am/...>:

² 2027-2029թթ. ՄԺԾԾ-ն հրապարակված է ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում՝ https://minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/ (այցելվել է 10.07.2026թ.)

գնահատումը՝ դրանք միջազգային գնահատականների և նախորդ ծրագրերի հետ համադրելու միջոցով:

2. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

ՀՀ կառավարության գնահատմամբ՝ 2026թ. համաշխարհային տնտեսության և Հայաստանի հիմնական գործընկեր երկրների տնտեսական զարգացումները կձևավորվեն աշխարհաքաղաքական բարձր անորոշության պայմաններում: Մերձավոր Արևելքում ռազմական լարվածության խորացումը, միջազգային առևտրային հոսքերի փոփոխությունները և համաշխարհային տնտեսությունում պահպանվող կառուցվածքային խնդիրները շարունակում են մնալ տնտեսական աճի հիմնական ռիսկային գործոնները: Միաժամանակ, Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումների համաձայն՝ 2026-2027թթ. համաշխարհային տնտեսության աճը կկազմի համապատասխանաբար 3.1% և 3.2%, իսկ Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում ակնկալվում են համեմատաբար թույլ աճի տեմպեր՝ պատմական միջին մակարդակներից ցածր:

Չնայած արտաքին միջավայրի անորոշություններին՝ Հայաստանի տնտեսությունում վերջին տարիներին արձանագրվել են համեմատաբար բարձր աճի տեմպեր: Կառավարության գնահատմամբ՝ 2023-2025թթ. տնտեսական աճը միջին հաշվով կազմել է 7.1%՝ հիմնականում պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտությունից հետո դեպի Հայաստան մարդկանց և կապիտալի ներհոսքով, զբոսաշրջության աճով, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընդլայնմամբ, ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցների պատճառով վերաարտահանման ակտիվացմամբ, ինչպես նաև պետական կապիտալ ծախսերի և բնակարանաշինության բարձր տեմպերով:


2026թ. առաջին եռամսյակում տնտեսական աճը որոշակիորեն դանդաղել է և կազմել 4.0%: Աճին առավելապես նպաստել են ծառայությունների, արդյունաբերության և շինարարության ոլորտները, մինչդեռ գյուղատնտեսության ոլորտում արձանագրվել է անկում: Կառավարության գնահատմամբ՝ ընթացիկ տնտեսական զարգացումների, պետական կապիտալ ծախսերի դերի պահպանման, ինչպես նաև Ամուլսարի շահագործման և կառուցվածքային բարեփոխումների հնարավոր ազդեցությունների արդյունքում 2026թ. համար սպասվում է շուրջ 5.4% տնտեսական աճ, իսկ միջնաժամկետում (2027-2031թթ.)՝ միջինում 6.0% աճ: Ընդ որում, համաձայն Ծրագրի՝ 2026-ին և միջնաժամկետում տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների և արդյունաբերության աճերով: **Ի դեպ, Ամուլսարի շահագործման ստույգ մեկնարկի վերաբերյալ ձևակերպումը նոր չէ: Այն առկա է վերջին երեք ՄԺԾԾ-ներում. առաջին անգամ այն ներառվել է 2025-2027թթ. ՄԺԾԾ-ում, որտեղ**

նշվում էր, որ հանքավայրը կշահագործվի արդեն ծրագրի կազմման տարում (2024-ին) և դրական նպաստում կունենա այդ տարվա տնտեսական աճին: Հետագայում նույն միտքը կրկնվել է նաև 2026-2028 և 2027-2029 թվականների ՄԺԾԾ-ներում: Ավելին, դրանից առաջ էլ՝ 2023-2025 և 2024-2026 թվականների ՄԺԾԾ-ներում, չէր բացառվում հանքավայրի շահագործման մեկնարկը: Հետևաբար, հաշվի առնելով, որ վերջին մի քանի տարիներին Ամուլսարի շահագործման մեկնարկի վերաբերյալ ակնկալիքները պարբերաբար տեղափոխվել են ավելի ուշ ժամանակաշրջան, առկա է հիմնավոր թերահավատություն առ այն, որ արդեն այս տարի հանքավայրը կսկսի շահագործվել:

Միջնաժամկետ հատվածում (2027-2031թթ.) կառավարությունը կանխատեսում է տարեկան միջինը 6.0% տնտեսական աճ: Ընդ որում, համաձայն Ծրագրի՝ վերջին տարիներին Հայաստանի տնտեսական աճի ներուժը բարձրացել է՝ հասնելով 5.0-5.5%-ի: Կառավարության կանխատեսմամբ՝ 2027-2031թթ. տնտեսական աճն աստիճանաբար կարագանա՝ 2027թ. 5.6%-ից հասնելով 2030-2031թթ. 6.4%-ի:

Գծապատկեր 1-ում ներկայացված են տնտեսական աճի նախորդ չորս տարիների փաստացի, ընթացիկ տարվա սպասվող և առաջիկա երեք տարիների կանխատեսվող մեծությունների վերաբերյալ տվյալները:

Գծապատկեր 1. Տնտեսական աճի կանխատեսումների համեմատականը, %³



*) ԿԲ-ն կանխատեսումը կատարել է զարգացման երկու տարբեր սցենարների համար՝

- «Ա», որը ենթադրում է համաշխարհային չեզոք տրոստադրույքների հնարավոր աճ, ներքին տնտեսությունում ավելցուկային պահանջարկի պայմանների ձևավորում և գնաճային սպասումների արագացման ռիսկեր,
- «Բ», որը կապված է համաշխարհային տնտեսության աճի դանդաղման հեռանկարի, արտահանման առանձին ուղղություններում առաջացած խնդիրների հեղուկացման գնանկումային ռիսկերի ձևավորման և ՀՀ տնտեսության ռիսկի հավելավճարի հիմնարար նվազման հետ:

Գծապատկերը վկայում է, որ Ծրագրում դիտարկված միջազգային կազմակերպությունների կանխատեսումները 2026-2029թթ. Հայաստանի տնտեսության աճի վերաբերյալ, ընդհանուր առմամբ, միմյանցից շատ չեն տարբերվում:

Գծապատկերից երևում է, որ ՖՆ-ն 2026-ի համար կանխատեսում է 5.4% տնտեսական աճ, որը միջնաժամկետ հատվածում աստիճանաբար արագանում է՝ 2029-ին հասնելով 6.1%-ի: ՖՆ-ի կանխատեսումներն առավել լավատեսական են հատկապես միջնաժամկետ հեռանկարի գնահատման հարցում՝ ակնկալելով տնտեսական աճի ներուժի հետագա ընդլայնում և կառուցվածքային բարեփոխումների դրական ազդեցություն: Սակայն պետք է նշել, որ, ըստ ՄԺԾԾ ծրագրի, ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված աննախադեպ պատժամիջոցների պատճառով ՀՀ տնտեսական աճի

³ Աղբյուրները՝

1. ԿԲ պաշտոնական կայք, 2026 թ. 1-ին եռամսյակի դրամավարկային քաղաքականության զեկույց՝ https://old.cba.am/AM/ppperiodicals/MPR_2026Q1_ARM.pdf (այցելվել է 13.07.2026թ.)

2. ԱՄՀ վիճակագրական տվյալների բազա՝

https://www.imf.org/external/datamapper/NGDP_RPCH@WEQ/ARM?zoom=ARM&highlight=ARM (այցելվել է 13.07.2026թ.)

3. ՀԲ Մակրոտնտեսական և աղքատության զեկույց՝

<https://thedocs.worldbank.org/en/doc/d5f32ef28464d01f195827b7e020a3e8-0500022021/related/mpo-arm.pdf> (այցելվել է 13.07.2026թ.)

կանխատեսումներն իրենց մեջ կրում են մեծ անորոշություն՝ պարունակելով երկկողմանի (դեպի ներքև՝ նվազեցման ուղղությամբ ազդող և դեպի վեր՝ աճին նպաստող) ռիսկեր, ընդ որում, դեպի ներքև ռիսկերը համեմատաբար գերակշռում են:

ԱՄՀ-ն 2026-2027թթ. համար կանխատեսում է համեմատաբար բարձր տնտեսական աճ՝ համապատասխանաբար 5.3% և 5.5%, սակայն 2028-2029թթ. համար աճի տեմպը գնահատում է 5.0% մակարդակում, ինչը զգալիորեն ցածր է ՖՆ կանխատեսումից:

ՀԲ կանխատեսումները ևս ավելի զուսպ են. կազմակերպությունը 2026թ. և 2027թ. համար կանխատեսում է համապատասխանաբար 5.3% և 5.1% տնտեսական աճ, իսկ 2028թ.՝ 5.0%:

ԿԲ սցենարային կանխատեսումները հնարավոր զարգացումների բավական լայն միջակայք են ներառում: «Ա» սցենարի դեպքում տնտեսական աճը 2026-2029թթ. կգտնվի 4.9-7.1% միջակայքում, իսկ «Բ» սցենարով ենթադրվող տատանումներն ավելի մեղմ են՝ 4.7%-ից 5.3%:

Ընդհանուր առմամբ, գծապատկերից երևում է, որ ՖՆ կանխատեսումները շատ ավելի լավատեսական են (հատկապես միջնաժամկետ հեռանկարում), քան տեղեկանքում դիտարկված միջազգային կազմակերպությունների կանխատեսումները:

Աղյուսակ 1-ում ներկայացված են Ծրագրի մշակման համար հիմք հանդիսացած հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների՝ 2023-2025 թվականների փաստացի, 2026-ի սպասվող և 2027-2029 թվականների կանխատեսվող մեծությունները:

Աղյուսակ 1. 2027-2029թթ. ՄԺԾԾ հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները

<i>Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ</i>	2023	2024	2025	2026	2027	2028	2029
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր	կանխ.	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	9,492.5	10,249.8	11,342.7	12,333.2	13,415.8	14,614.7	15,964.1
Տնտեսական աճ, %	8.3	5.9	7.1	5.4	5.6	5.8	6.1
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	3.1	2.0	3.3	3.2	3.1	3.0	3.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	-0.6	1.5	3.3	3.6	3.3	3.1	3.0
Գնաճ (միջին), %	2.0	0.3	3.3	3.7	3.3	3.1	3.0
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %							

Արդյունաբերություն	-3.0	2.0	3.8	7.2	6.5	6.5	6.3
Գյուղատնտեսություն	-0.4	1.5	5.2	2.5	2.8	2.8	3.3
Շինարարություն	15.6	14.0	20.9	5.8	5.3	5.5	5.5
Ծառայություններ	12.5	8.0	6.0	5.2	5.7	6.0	6.4
Զուտ հարկեր	11.0	-1.6	10.4	5.4	5.5	5.7	6.0
ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, %							
Վերջնական սպառում	6.9	5.8	9.0	7.0	4.6	5.3	6.6
Պեղական	10.2	-8.2	3.7	11.6	0.8	4.5	12.6
Մասնավոր	6.4	8.3	9.8	6.3	5.2	5.4	5.7
Հիմնական միջոցներում ներդրումներ ⁴	9.0	11.9	14.9	5.2	7.5	7.0	6.5
Պեղական	25.7	11.7	28.6	0.7	9.4	9.4	7.6
Մասնավոր	3.3	12.0	9.2	7.5	6.6	5.9	5.9
Արտահանում	32.3	27.6	-27.8	-8.4	1.7	2.8	3.5
Ներմուծում	32.5	28.5	-21.2	-9.3	-2.6	3.4	2.5
Արտաքին հատված (ՀՆԱ-ի նկատմամբ, %)							
Ընթացիկ հաշիվ	-2.8	-4.6	-7.2	-5.6	-3.9	-4.7	-4.7
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-1.4	-2.8	-5.4	-4.6	-2.9	-3.5	-3.6
Արտահանում	60.9	73.1	50.0	43.3	41.9	40.7	39.6
Ներմուծում	62.3	75.9	55.4	47.9	44.7	44.2	43.2
Դրամական փոխանցումներ	4.2	3.1	2.9	3.0	3.0	2.9	2.8

Ինչպես երևում է աղյուսակից, Ծրագրով ակնկալվում է, որ 2026թ. վերջնական սպառումը և ներդրումները կաճեն՝ համապատասխանաբար 7.0%-ով և 5.2%-ով: Ի դեպ, 2026-2028թթ. ՄԺԾԾ-ով 2026-ի համար կանխատեսվում էր ներդրումների ավելի քան կրկնակի բարձր աճի տեմպ՝ 10.8%: Սպասվում է, որ արտահանումը և ներմուծումը 2026-ին կնվազեն համապատասխանաբար՝ 8.4%-ով և 9.3%-ով: Իսկ 2027-2031թթ. դրանք կաճեն միջինում 2.8% և 1.8%-ով, ինչը, ըստ Ծրագրի, պայմանավորված կլինի ՀՀ և համաշխարհային տնտեսական աճերով, ՀՀ տնտեսության արտահանելի հատվածի զարգացումներով, տնօրինվող եկամուտի և զբոսաշրջության աճով, ինչպես նաև կառավարության՝ արտահանմանը և ներդրումների խրախուսմանն ուղղված քաղաքականությամբ: Ի դեպ, նախորդ՝ 2026-2028թթ., ՄԺԾԾ-ով ենթադրվում էր, որ արդեն 2026-ից՝ 2026-2030 թվականներին, դրանք կաճեն միջինում համապատասխանաբար 3.7% և 3.2%-ով: Ստացվում է, որ մեկ տարի անց աճը մեկ տարով հետաձգվում է: Ընդ

⁴ Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կադրաված կապիտալ ներդրումները, քանի որ 2019-ից ՀՀ ՎԿ-ի կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն, այլ կերպ ասած՝ դրա մեջ ներառվում են նաև վիճակագրական սխալները:

որում, աճի տեմպերի հարցում այս տարի ՖՆ-ն ավելի «համեստ» է:

Ծրագրում նշված է, որ 2026-ի առաջին երեք ամիսներին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը վատթարացել է՝ պայմանավորված նախորդ տարվա համադրելի ցուցանիշի նկատմամբ ներմուծման ծավալների առաջանցիկ աճով: Միաժամանակ, ծառայությունների հաշվեկշռի վրա դրական ազդեցություն է թողել այն հանգամանքը, որ նշված ժամանակահատվածում ՀՀ այցելած զբոսաշրջիկների թիվն աճել է, իսկ ՀՀ-ից մեկնած զբոսաշրջիկներինը՝ նվազել: ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումներն աճել են:

Համաձայն Ծրագրի՝ սպասվում է, որ 2026թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կբարելավվի՝ հասնելով ՀՆԱ-ում 5.6% մակարդակի՝ պայմանավորված առևտրային հաշվեկշռի բարելավմամբ, ինչպես նաև դրամական փոխանցումների ավելացմամբ: Նշված է, որ միջնաժամկետում 2022-2025թթ. գործոնների ազդեցությունների չեզոքացման (մասնավորապես, վերաարտահանման գործոնի չեզոքացման, ՌԴ-ից զբոսաշրջիկների հոսքերի կայունացման) պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը կկայունանա իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակի շուրջը: **Ի դեպ, նախորդ՝ 2026-2028թթ. ՄԺԾԾ-ով ենթադրվում էր, որ 2025-ին ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը վատթարանալով կհասնի 5%-ի, այնինչ փաստացի վատթարացումը շատ ավելին է եղել՝ 7.2%: Այս իմաստով, 2026-ին ցուցանիշի զգալի բարելավման ակնկալիքի իրատեսականության հարցում առկա են լուրջ մտահոգություններ:**

Ծրագրում նշված է, որ դեպի ՀՀ զբոսաշրջային մեծ հոսքերը, ՏՏ ոլորտի ընկերությունների և աշխատակիցների ՀՀ տեղափոխվելը, զբաղվածների թվի ավելացումը, ինչպես նաև պետական կապիտալ ծախսերի դերի շարունակական բարձրացումը հանգեցրել են ՀՀ տնտեսության ներուժային աճի տեմպի բարձրացման՝ նախկին 4-4.5% գնահատված միջակայքից հասնելով 5-5.5% միջակայքի:

Եվ այսպես, 2027-2029թթ. ՄԺԾԾ-ի մակրոտնտեսական սցենարն այս անգամ էլ կառուցված է բավական լավատեսական կանխատեսումների հիման վրա, թեև փաստաթղթում բավարար ուշադրություն չի դարձվում այն հանգամանքին, որ վերջին տարիների բարձր աճի զգալի մասը պայմանավորված էր արտածին և չլրկնվող գործոններով: Այս պայմաններում 2027-2031թթ. կանխատեսվող միջինում 6% տնտեսական աճի իրատեսականությունը խորհելու տեղիք է տալիս, հատկապես այն պարագայում, երբ միջազգային կազմակերպությունների կանխատեսումները զգալի չափով պահպանողական են:


3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունը միջնաժամկետ հատվածում շարունակելու է ուղղված լինել պետական ֆինանսների կայունության ապահովմանը, մակրոտնտեսական հավասարակշռության պահպանմանը և կառավարության ռազմավարական առաջնահերթությունների ֆինանսավորմանը՝ նշված է 2027-2029թթ. ՄԺԾԾ-ում: Ըստ Ծրագրի՝ առանձնակի ուշադրություն է դարձվելու պաշտպանական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը, մարդկային կապիտալում ներդրումների շարունակական ավելացմանը, ինչպես նաև հարկաբյուջետային կոնսոլիդացիայի միջոցով պետական պարտքի կայուն մակարդակի պահպանմանը:

Ծրագրում կառավարության հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում ներկայացված են պետական բյուջեի եկամուտների, ծախսերի, պակասուրդի և կառավարության պարտքի միջնաժամկետ կանխատեսումները:

Ծրագրով ակնկալվում է, որ 2026-2029 թվականների համար պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կկազմեն համապատասխանաբար 3,140.7 մլրդ դրամ, 3,475.3 մլրդ դրամ, 3,794.2 մլրդ դրամ և 4,174.5 մլրդ դրամ, իսկ հարկային եկամուտներն ու պետական տուրքերը՝ 3,016.2 մլրդ դրամ, 3,349.9 մլրդ դրամ, 3,685.9 մլրդ դրամ և 4,063.6 մլրդ դրամ (Գծապատկեր 2): Երկու դեպքում էլ նոր ՄԺԾԾ-ով նախատեսված ցուցանիշները գերազանցում են նախորդ՝ 2026-2028թթ. ծրագրով նույն տարիների համար ներկայացված կանխատեսումները:

Գծապատկեր 2. Պետական բյուջեի եկամուտների կանխատեսումների համեմատականը, մլրդ դրամ



Ծրագրում նշվում է, որ եկամուտների աճը նախատեսվում է ապահովել տնտեսական ակտիվության պահպանման, հարկային վարչարարության շարունակական կատարելագործման և հարկային քաղաքականության միջոցառումների իրականացման արդյունքում: Միաժամանակ, պետական


եկամուտների աճը դիտարկվում է որպես կառավարության առաջնահերթ ծրագրերի ֆինանսավորման և հարկաբյուջետային կայունության պահպանման կարևոր նախապայման:

Ի դեպ, Ծրագրում ընդգրկված է նաև «Հարկային համակարգի փոփոխությունների հայեցակարգը», որում մասնավորապես ներկայացված են հարկային համակարգի առաջարկվող փոփոխությունների սկզբունքները: Դրանցից առավել ուշագրավ է կայունության և կանխատեսելիության սկզբունքը, համաձայն որի՝ *«հարկային համակարգի հիմնական փոփոխությունները պետք է կատարվեն համակարգված ձևով՝ բյուջետային գործընթացին զուգահեռ, որպեսզի հնարավոր լինի յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի շրջանակներում համարելել հանրային ռեսուրսի ձևավորման և ծախսման փոխհամաձայնեցված քաղաքականությունները: Այս համարեքստում, հարկային համակարգի հարվածական և հաճախակի փոփոխություններ չեն կատարվելու: Հարկային համակարգի հիմնական փոփոխությունները լինելու են երկարաժամկետ և կայուն»:*

Ըստ Ծրագրի՝ 2026թ. հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 1,128 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 13.7%-ով, իսկ հարկերը և տուրքերը կազմել են 1,086 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 14.4%-ով: Հարկային եկամուտների աճի հիմնական աղբյուր են հանդիսացել շահութահարկը, եկամտային հարկը, ինչպես նաև բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերը:

Նախորդ ՄԺԾԾ-ի համեմատ նոր Ծրագրում դիտարկվող ամբողջ ժամանակահատվածի համար պետական բյուջեի եկամուտների կանխատեսումները բարձրացվել են: Սակայն եկամուտների միայն բացարձակ մեծությունների աճով չէ, որ պետք է գնահատել պետության հարկաբյուջետային քաղաքականության զարգացումներն ու միտումները: Այդ իմաստով, առավել կարևոր է ՀՆԱ-ում դրանց տեսակարար կշիռների կանխատեսումների համեմատականը, որը ներկայացված է Գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3. Պետական բյուջեի եկամուտների կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում




Գծապատկեր 3-ից երևում է, որ ակնկալվում է «պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ» ցուցանիշի շարունակական աճ՝ 2026թ. 25.5%-ից մինչև 2029թ. 26.1%:

Գծապատկերներ 2-ի և 3-ի համադրությունը ցույց է տալիս, որ պետական բյուջեի եկամուտների բացարձակ մեծությունների աճի տեմպերը շատ ավելի բարձր են, քան դրանց՝ ՀՆԱ-ի համեմատ տոկոսային աճի տեմպերը:

Ինչպես երևում է Գծապատկեր 4-ից, 2027-2029թթ. ՄԺԾԾ-ով հարկային եկամուտների և պետական տուրքերի՝ ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցությունը ծրագրային ամբողջ ժամանակահատվածում աստիճանաբար աճում է՝ 2026թ. նախատեսված 24.5%-ից 2029-ին հասնելով 25.5%-ի: Ի դեպ, նախորդ՝ 2026-2028թթ. ՄԺԾԾ-ի համեմատ 2026 թվականի համար կանխատեսումները փոքր-ինչ նվազեցվել, իսկ 2027, 2028 և 2029 թվականների համար փոքր-ինչ բարձրացվել են:

Գծապատկեր 4. Հարկային եկամուտների կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում



Ծրագրում նշվում է, որ հարկային եկամուտների աճը նախատեսվում է ապահովել հարկային վարչարարության հետագա կատարելագործման, ստվերային տնտեսության կրճատման, ինչպես նաև հարկային քաղաքականության միջոցառումների իրականացման արդյունքում: Կառավարությունը շարունակում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավումը դիտարկել որպես միջնաժամկետ հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակներից մեկը:

Համաձայն Ծրագրի՝ 2026-ին հարկային վարչարարության բարելավման և օրենսդրության փոփոխությունների արդյունքում սպասվում է, որ հարկային եկամուտները կկազմեն 3,016 մլրդ դրամ՝ ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցությունը կբարելավվի շուրջ 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 24.5%: **Մինչդեռ ակնհայտ է, որ հարկային մուտքերի ավելացումը հիմնականում պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով:**


Ծրագրով ակնկալվում է, որ պետական բյուջեի ընդհանուր ծախսերը 2027-2029 թվականներին կկազմեն համապատասխանաբար 3,917 մլրդ դրամ, 4,201 մլրդ դրամ և 4,461 մլրդ դրամ: Դրանք մոտ 5%-ով գերազանցում են 2026-2028թթ. ՄԺԾԾ-ով նույն տարիների համար կանխատեսվող համապատասխան մեծությունները: **Ծրագրով ակնկալվում է, որ «պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ» ցուցանիշը 2027-2029թթ. շարունակաբար նվազելու է (Գծապատկեր 5): Հաշվի առնելով բյուջեի ծախսերի՝ բացարձակ մեծությամբ աստիճանական աճը, այդ նվազումը բացառապես պայմանավորված է լինելու ՀՆԱ-ի՝ բյուջեի ծախսերի նկատմամբ առաջանցիկ կանխատեսվող աճով: Այսինքն՝ «ծախսեր/ՀՆԱ» ցուցանիշի բարելավումը պայմանավորված է ակնկալվող բարձր տնտեսական աճով: Հետևաբար, այդ թիրախի ապահովումը նույնպես վտանգված է, քանի որ մեծապես կախված է մակրոտնտեսական կանխատեսումների իրականացումից:**

Ինչ վերաբերում է ընթացիկ տարվան, ապա Ծրագրով սպասվում է, որ պետական բյուջեի ընդհանուր ծախսերն այս տարի նախորդ տարվա համեմատ կաճեն շուրջ 10%-ով՝ կազմելով 3,636 մլրդ դրամ: ՀՆԱ-ի նկատմամբ դրանց հարաբերակցությունը կավելանա շուրջ 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 29.5%:

Ուշագրավ է, որ «ՀՀ 2026թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված է բյուջեի ծախսերի ավելի փոքր մեծություն՝ 3,627.6 մլրդ դրամ: **Հայտնի է, որ գործող կառավարության գործունեության տարիներին ձևավորվել է տխուր ավանդույթ՝ բյուջեի ծախսերը մշտապես թերակատարվում են: Բացառություն չէ նաև 2026 թվականը, որի համար դեռևս միայն 1-ին եռամսյակի կատարման հաշվետվությունն է հրապարակված: Համաձայն այդ հաշվետվության՝ բյուջեի ծախսերը 2026-ի 1-ին եռամսյակում թերակատարվել**

են 29.6%-ով: Այս պարագայում ակնկալել, որ տարեվերջին բյուջեի փաստացի ծախսերը նույնիսկ գերազանցելու են բյուջեով պլանավորված մեծությունը, ծայրահեղ անիրատեսական է: Իսկ եթե նույնիսկ ընթացիկ տարվա սպասվող մեծությունն է անիրատեսական, ինչպե՞ս կարող են վստահություն ներշնչել դրա հիման վրա առաջիկա երեք տարվա համար կատարված կանխատեսումները:


Գծապատկեր 5. Պետական բյուջեի ծախսերի կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում



Ի դեպ, 2027-2029թթ., ՄժԾԾ-ում պետական բյուջեի ծախսային ուղղությունները ներկայացնելիս, դարձյալ ոչինչ չի ասվում կենսաթոշակի և նվազագույն աշխատավարձի բարձրացման մասին: Նկատի ունենալով, որ, համաձայն 2027-2029թթ. ՄժԾԾ-ի, 2026-2029 թվականներին սպասվում է 13.6% գնաճ $[100 \times (1+0.036) \times (1+0.033) \times (1+0.031) \times (1+0.03) - 100 \approx 13.6\%]$, ստացվում է, որ վերոհիշյալ ժամանակահատվածում իրական կենսաթոշակը և աշխատավարձը 13.6%-ով նվազելու են:

ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի ծախսային բաղադրիչների՝ նախորդ տարիների փաստացի, ընթացիկ տարվա սպասվող և առաջիկա երեք տարիների կանխատեսվող մեծությունների դինամիկան ներկայացված է Գծապատկեր 6-ում:

Գծապատկեր 6. Պետական բյուջեի ծախսային բաղադրիչների կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում




Ինչպես երևում է Գծապատկեր 6-ից, 2027-2029թթ. ՄԺԾԾ-ով նախատեսվում է, որ «ընթացիկ ծախսեր/ՀՆԱ» ցուցանիշը կնվազի, իսկ «կապիտալ ծախսեր/ՀՆԱ» ցուցանիշը՝ կաճի: Մասնավորապես, ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին 2026 թվականի 23.8%-ից աստիճանաբար նվազելով 2029-ին հասնելու է 21.9%-ի, մինչդեռ ակնկալվում է, որ կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը նույն ժամանակահատվածում 5.7%-ից կաճի մինչև 6.1%: Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ «ընթացիկ ծախսեր/ՀՆԱ» ցուցանիշի նվազումից բնավ չի հետևում, որ ընթացիկ ծախսերը նվազելու են: Ընդհակառակը, դրանք շարունակաբար աճելու են, և կանխատեսվում է, որ 2029-ին 2025-ի փաստացի մեծությունից 33.6%-ով ավելի են լինելու: Իսկ ընդհանուր ծախսերի մեջ ծախսային երկու բաղադրիչների՝ ընթացիկ ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների (դրանք հիմնականում կապիտալ ծախսերն են) տեսակարար կշիռներն աննշան՝ 0.8 տոկոսային կետով են փոխվելու՝ հոգուտ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների: Այսինքն՝ ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի ծախսային բաղադրիչների հարաբերակցության փոփոխությունը բացառապես երկու հանգամանքով է

պայմանավորված՝ մեծամասամբ, առաջիկա տարիների համար Ծրագրով ակնկալվող բարձր տնտեսական աճով և, մասամբ, ընթացիկ ծախսերի համեմատ կապիտալ ծախսերի որոշակի առաջանցիկ ավելացմամբ: Ինչ վերաբերում է ընթացիկ տարվան, ապա, համաձայն Ծրագրի, սպասվում է, որ ընթացիկ տարում նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերի հարաբերությունը ՀՆԱ-ին կաճի 0.8 տոկոսային կետով, իսկ կապիտալ ծախսերինը, ընդհակառակը, 0.4 տոկոսային կետով կնվազի:

Ծրագրում նշվում է, որ առաջիկա տարիներին կառավարությունը շարունակելու է առաջնահերթություն տալ կապիտալ ծախսերին՝ դրանք դիտարկելով որպես երկարաժամկետ տնտեսական աճի, ենթակառուցվածքների զարգացման և տնտեսության մրցունակության բարձրացման կարևոր գործոն: Այնուամենայնիվ, միանշանակ է, որ կապիտալ ծախսերի տեսակարար կշռի կանխատեսվող աճը դեռևս ինքնին բավարար չէ պետական ծախսերի կառուցվածքում որակական տեղաշարժի մասին խոսելու համար: Ավելին, այս առումով վճռորոշ նշանակություն ունի ոչ այնքան կապիտալ ծախսերի պլանավորվող ծավալը, որքան դրանց՝ ամբողջությամբ և ժամանակին իրականացումը:

Ինչպես երևում է Գծապատկեր 7-ից, 2027-2029թթ. ՄԺԾԾ-ով նախատեսվում է պետական բյուջեի պակասուրդի հետևողական կրճատում: Եթե 2026-ին սպասվում է, որ այն կլինի ՀՆԱ-ի 4.0%-ի չափով, ապա ծրագրի ավարտին՝ 2029 թվականին, պետք է կազմի արդեն 1.8%: Նախորդ՝ 2026-2028թթ. ՄԺԾԾ-ի համեմատ 2026 և 2027 թվականների համար պակասուրդի կանխատեսումները ևս վերանայվել են նվազման ուղղությամբ:

Գծապատկեր 7. Պետական բյուջեի պակասուրդը, % ՀՆԱ-ում



ՄԺԾԾ-ում նշվում է, որ առաջիկա տարիներին հարկաբյուջետային քաղաքականության կարևոր նպատակներից մեկը հարկաբյուջետային

կոնսոլիդացիայի շարունակումն է՝ պետական պարտքի կայուն մակարդակի պահպանման և հարկաբյուջետային ռիսկերի սահմանափակման նպատակով:


Գծապատկերներ 3-ի, 5-ի և 7-ի համադրությունը ցույց է տալիս, որ «պակասուրդ/ՀՆԱ»-ի կրճատումը նախատեսվում է ապահովել հիմնականում բյուջետային ծախսերի՝ ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցության նվազմամբ, մինչդեռ «բյուջեի եկամուտներ/ՀՆԱ» ցուցանիշի աճն անհամեմատ ավելի փոքր է: Սա վկայում է այն մասին, որ կառավարությունը միջնաժամկետ հարկաբյուջետային կոնսոլիդացիայի հիմնական գործիք դիտարկում է ծախսային քաղաքականությունը:

Պակասուրդի ծրագրված կրճատումը մեծապես կախված է ՄԺԾԾ-ում ներկայացված մակրոտնտեսական կանխատեսումների իրականացումից: Հետևաբար, տնտեսական աճի, գնաճի կամ եկամուտների հավաքագրման՝ ծրագրային ցուցանիշներից էական շեղումների դեպքում պակասուրդի կրճատման կանխատեսվող հետագիծը կարող է չապահովվել:

Գծապատկեր 8-ից երևում է, որ կառավարության պարտքն անվանական արտահայտությամբ ծրագրային ամբողջ ժամանակահատվածում շարունակում է աճել՝ 2026-ի 6.0 տրիլիոն դրամից 2029-ին հասնելով շուրջ 7.7 տրիլիոն դրամի:

«Կառավարության պարտք/ՀՆԱ» ցուցանիշի համեմատաբար կայուն մնալն առավելապես պայմանավորված է ՀՆԱ-ի աճի կանխատեսվող բարձր տեմպերով:

Գծապատկեր 8. Կառավարության պարտքի դինամիկան



Ծրագրում նշվում է, որ կառավարության պարտքի կառավարումը շարունակելու է իրականացվել պետական ֆինանսների կայունության ապահովման և պարտքային ռիսկերի սահմանափակման սկզբունքներով: Միաժամանակ, փաստաթղթում ընդգծվում է, որ պարտքի կայունությունը

շարունակում է կախված մնալ մակրոտնտեսական զարգացումներից, հատկապես տնտեսական աճի և հարկաբյուջետային ցուցանիշների կատարողականից:

Ըստ Ծրագրի՝ միջնաժամկետ հատվածում կառավարության պարտքի բեռն անհամեմատ ծանրանալու է: Պարտքի սպասարկման տոկոսավճարները 2025-ի փաստացի մեծության համեմատ 2029-ին աճելու են 42.4%-ով՝ 349 մլրդ դրամից հասնելով 493 մլրդ դրամի: Ի դեպ, ՄԺԾԾ-ում հեղինակները շեշտում են «տոկոսավճարներ/բյուջեի եկամուտներ» հարաբերության առաջիկա երեք տարիներին (2027-2029 թվականներին) կանխատեսվող 0.5 տոկոսային կետով ակնկալվող նվազումը, առանց հաշվի առնելու, որ այդ ցուցանիշի նվազումը շուրջ եռակի զիջում է նույն ցուցանիշի նախորդ երեք տարիների (2023-2025 թվականների) 1.4 տոկոսային կետ աճի տեմպին:

Հատկանշական է, որ Ծրագրում հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների բարելավումը մեծապես հիմնված է անվանական ՀՆԱ-ի կանխատեսվող արագ աճի վրա: Հետևաբար, ծրագրի գրեթե բոլոր թիրախների իրագործելիությունն առավելապես կախված է մակրոտնտեսական կանխատեսումների իրականացումից: Մասնավորապես, եթե ՄԺԾԾ-ի հիմքում ընկած տնտեսական աճի կանխատեսումները չիրականանան, ապա մեծ հավանականությամբ կարիք կլինի վերանայել բյուջեի եկամուտների, ծախսերի, պակասուրդի և կառավարության պարտքի վերաբերյալ ակնկալիքները: Այդ պատճառով ծրագրի հիմնական ռիսկը կապված է ոչ այնքան առանձին հարկաբյուջետային ցուցանիշների, որքան դրանց հիմքում ընկած մակրոտնտեսական կանխատեսումների իրատեսականության հետ:

4. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ

2027-2029թթ. ՄԺԾԾ-ում ներկայացված են մակրոտնտեսական և հարկաբյուջետային հիմնական ռիսկերը, որոնք կարող են հանգեցնել մակրոտնտեսական և հարկաբյուջետային ցուցանիշների՝ Ծրագրով նախատեսված մեծություններից շեղմանը: Նշվում է, որ կորոնավիրուսի համավարակի հետևանքները դեռ չհաղթահարած տարածաշրջանը բախվեց Ռուս-ուկրաինական հակամարտության առաջացրած աշխարհաքաղաքական և տնտեսական մարտահրավերներին, ինչի բացասական հետևանքներն արդեն տեսանելի են ոչ միայն տարածաշրջանում, այլև ամբողջ աշխարհում: Ռուս-ուկրաինական հակամարտությունը, Ռուսաստանի դեմ կիրառված աննախադեպ պատժամիջոցները, մերձավորարևելյան պատերազմը և այլ աշխարհաքաղաքական զարգացումներ ձևավորել են նոր միջավայր, որի պայմաններում տնտեսական աճի կանխատեսումները բնութագրվում են

անորոշության բարձր մակարդակով՝ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ հատվածում:

Ծրագրում ռիսկերը բաժանված են երկու հիմնական խմբի՝ *մակրոտնտեսական* և *հարկաբյուջետային*:

Մակրոտնտեսական ռիսկերը ներկայացված են երկու ենթախմբերով՝ արտաքին միջավայրից բխող ռիսկեր և ներքին միջավայրից բխող ռիսկեր:

Նշվում է, որ արտաքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը պայմանավորված են՝

- Ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված դրական արտաժին գործոնների (ՌԴ-ից զբոսաշրջային հոսքերի, դրամական փոխանցումների, SS ոլորտի ընկերությունների և աշխատակիցների դեպի ՀՀ տեղափոխման) չեզոքացմամբ և հոսքերի հետջրջմամբ,
- ՌԴ-ի կողմից հայկական ծագման ապրանքների ներմուծման սահմանափակումների շարունակմամբ և հնարավոր ընդլայնմամբ,
- ՀՀ ապրանքների արտահանման մատակարարումների լոգիստիկ խնդիրների խորացմամբ,
- աշխարհաքաղաքական իրավիճակով, այդ թվում՝ տարածաշրջանային ռազմական հակամարտությունների առկայությամբ,
- տարածաշրջանային հակամարտությունների (մերձավորարևելյան և ռուս-ուկրաինական) հետևանքով պարենային և ոչ պարենային ապրանքների գների աճով,
- առևտրային պայմանների սրացման և առևտրային քաղաքականության անորոշությունների պահպանման հետևանքով գործընկեր երկրների տնտեսական աճերի, հետևաբար նաև ՀՀ արտաքին պահանջարկի դանդաղմամբ:

Իսկ, որպես ներքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը պայմանավորող հնարավոր գործոններ, նշված են՝

- պետական կապիտալ ծախսերի թերակատարումը,
- Սոթքի հանքավայրի՝ ստորգետնյա եղանակով շահագործման հետ կապված խոչընդոտների ի հայտ գալու հետևանքով հանքավայրի արդյունահանման դանդաղումը,
- Ամուլսարի շահագործման հետաձգումը կամ սպասվածից ավելի քիչ հանքարդյունահանումը,

- ՀՀ կառավարության կառուցվածքային բարեփոխումների և արտահանման ու ներդրումների խթանման քաղաքականության ակնկալվող արդյունքների սպասվածից ավելի ուշ արտահայտումը,
- Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ՀՀ տնտեսական գործընթացներում սպասվածից ավելի դանդաղ ինտեգրումը,
- գյուղատնտեսության ճյուղում հնարավոր բացասական զարգացումները:

Ծրագրում թվարկված են նաև տնտեսական աճի՝ դեպի վեր ուղղված (դրական) մի քանի ռիսկեր: **Այնուամենայնիվ, նշված է, որ դեպի ներքև ռիսկերը շարունակում են գերակշռել դեպի վեր ռիսկերին:** Իսկ դա, հաշվի առնելով Ծրագրում ներկայացված համեմատաբար բարձր տնտեսական աճի կանխատեսումները, բավական խորը մտահոգությունների տեղիք է տալիս: Այսինքն, ըստ էության, հենց ՄԺԾԾ-ի հեղինակներն են ընդունում, որ տնտեսական զարգացումների հավանական շեղումներն առավելապես բացասական ուղղությամբ են, ինչը նշանակում է, որ ծրագրի հիմնական մակրոտնտեսական սցենարը ձևավորված է զգալի անորոշությունների շրջանակում:

2027-2029թթ. ՄԺԾԾ-ում առանձին անդրադարձ է կատարվել նաև հարկաբյուջետային հիմնական ռիսկերին, որոնք կարող են ազդել պետական բյուջեի եկամուտների, ծախսերի, դեֆիցիտի և կառավարության պարտքի ծրագրային ցուցանիշների վրա: Ծրագրում նշվում է, որ հարկաբյուջետային շրջանակի հիմնական ռիսկերը վերաբերում են մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումներին, «հարկային եկամուտներ/ՀՆԱ» ցուցանիշի թիրախավորված բարելավումների ոչ ամբողջական ապահովմանը, ինչպես նաև պետական բյուջեի ծախսերի, հատկապես կապիտալ ծրագրերի կատարման հնարավոր շեղումներին:

Նախորդ՝ 2026-2028թթ. ՄԺԾԾ-ի համեմատ հարկաբյուջետային ռիսկերի շրջանակն էական փոփոխությունների չի ենթարկվել: Ինչպես նախորդ, այնպես էլ նոր ՄԺԾԾ-ում հիմնական շեշտը դրված է հարկային եկամուտների ծրագրային աճի ապահովման, կապիտալ ծախսերի լիարժեք կատարման և պետական պարտքի կայունության պահպանման վրա:

Որպես **հարկաբյուջետային հիմնական ռիսկեր** Ծրագրում նշված են.

- ներքին կամ արտաքին ցնցումների տակ մակրոտնտեսական հնարավոր անբարենպաստ զարգացումների պատճառով մակրոտնտեսական ցուցանիշների ծրագրային կանխատեսումներից հնարավոր շեղումները, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ պետական բյուջեի

եկամուտների ձևավորման վրա, ինչպես նաև հանգեցնել ծախսային ճնշումների մեծացման,

- «հարկեր/ՀՆԱ» ցուցանիշի՝ հարկային վարչարարության ազդեցությամբ սպասվածից ավելի դանդաղ բարելավումը,
- միջազգային ֆինանսական շուկաների անկայունության և ֆինանսավորման պայմանների վատթարացման հավանականությունը (որպես հիմնական մարտահրավեր նշված է համաշխարհային տնտեսության հեռանկարների շուրջ անորոշությունը՝ պայմանավորված ԱՄՆ մաքսատուրքային «պատերազմներից», ռուս-ուկրաինական պատերազմից և Իրանում ռազմական գործողություններից բխող բացասական ազդեցություններով),
- պետական բյուջեի կապիտալ ծախսերի ծրագրերի ոչ ամբողջական կամ ուշացած իրականացման և ավելի թույլ հարկաբյուջետային ազդակի ձևավորման հավանականությունը,
- լրացուցիչ ֆինանսավորման պահանջ առաջացնող այլ ներքին ռիսկեր, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց՝ ՀՀ տնտեսությանն ինտեգրման դանդաղումը և աջակցության ծրագրերի երկարաձգումը, տարածաշրջանային անվտանգային միջավայրի վատթարացման պայմաններում անվտանգությանն ու պաշտպանությանն ուղղվող միջոցների ծավալի աճի լրացուցիչ կարիքի առաջացումը, արտահանելի հատվածի համար տնտեսական աջակցության լրացուցիչ ծրագրերի իրականացումը և այլն:

Ըստ Ծրագրի՝ սցենարային վերլուծության միջոցով նշված ռիսկերին տրվել է քանակական արտահայտություն, և դրանց կառավարման համար նախատեսվել են ՀՆԱ-ի 0.3-0.7 տոկոսի շրջանակներում պահուստային ֆոնդեր, գանձապետական կայունացման հաշվում ՀՆԱ-ի առնվազն 1 տոկոսի չափով «իրացվելիության բարձիկ»:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով նշենք.

ՀՀ կառավարության 2027-2029թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ, ՄԺԾ ծրագիր) համաձայն՝ 2026թ. համար կառավարությունը կանխատեսում է 5.4% տնտեսական աճ, որը միջնաժամկետ հատվածում պետք է աստիճանաբար արագանա և 2029-ին հասնի 6.1%-ի: Մինչդեռ, միջազգային կազմակերպությունների կանխատեսումները միջնաժամկետ հատվածի

տնտեսական աճի վերաբերյալ շարունակում են մնալ զգալի չափով պահպանողական: Սա վկայում է, որ **ՄԺԾԾ-ի առավել մտահոգիչ դրույթներից մեկը տնտեսական աճի կանխատեսումների լավատեսական բնույթն է:** Ընդ որում, լավատեսության շուրջ փաստաթղթում ներկայացված հիմնավորումներն առավելապես կապված են այնպիսի գործոնների հետ, որոնց ազդեցությունը կա՛մ արդեն թուլանում է, կա՛մ դրանց իրականացման ժամկետները վերջին տարիներին պարբերաբար հետաձգվում են: Ավելին, ՄԺԾ ծրագրում միաժամանակ նշված է, որ **ՀՀ տնտեսական աճի կանխատեսումներն իրենց մեջ կրում են մեծ անորոշություններ՝ պարունակելով դեպի ներքև (բացասաբար ազդող) և դեպի վեր (դրական զարգացումներ ենթադրող) երկկողմանի ռիսկեր:** **Եվ ուշագրավ է, որ դեպի ներքև ռիսկերը գերակշռում են:** Այսինքն, ըստ էության, հենց ՄԺԾԾ-ի հեղինակներն են ընդունում, որ զգալի անորոշությունների շրջանակում ձևավորված ծրագրի հիմնական մակրոտնտեսական սցենարի տնտեսական զարգացումների հավանական շեղումներն առավելապես բացասական ուղղությամբ են:

2027-2029թթ. ՄԺԾԾ-ով պետական բյուջեի ընդհանուր եկամուտների և հարկային եկամուտների անվանական մեծությունների կանխատեսումները վերանայվել են աճի ուղղությամբ: Մինչդեռ, աճը չի ուղեկցվում ՀՆԱ-ի նկատմամբ դրանց հարաբերակցության համարժեք ավելացմամբ:

Ծրագրով կանխատեսվում է, որ 2029-ին բյուջեի ընդհանուր ծախսերը կկազմեն 4,461 մլրդ դրամ՝ 2025-ի ցուցանիշից 35.0%-ով ավելի, իսկ կառավարության պարտքը, 2025-ի 5,355 մլրդ դրամից աճելով 43.6%-ով, 2029-ին կհասնի 7,689 մլրդ դրամի: Պետական բյուջեի ընդհանուր ծախսերի և կառավարության պարտքի շարունակական աճի դիմաց 2029 թվականին 2026-ի համեմատ կանխատեսվում է ՀՆԱ-ի նկատմամբ դրանց հարաբերակցության նվազում՝ պայմանավորված ՀՆԱ-ի առաջանցիկ աճով:

Ըստ Ծրագրի՝ միջնաժամկետ հատվածում կառավարության պարտքի բեռն անհամեմատ ծանրանալու է: Պարտքի սպասարկման տոկոսավճարները 2025-ի փաստացի մեծության համեմատ 2029-ին կազմելու են 42.4%-ով ավելի՝ 349 մլրդ դրամից հասնելով 493 մլրդ դրամի:

Հատկանշական է, որ ծրագրում շարունակում են կրկնվել մի շարք կանխատեսումներ, որոնց իրականացումը նախորդ տարիներին բազմիցս հետաձգվել է: Ամուլսարի հանքավայրի շահագործման մեկնարկի մասին դրույթը դրա ամենաբնորոշ օրինակներից է: Նախորդ ՄԺԾԾ-ներում էլ էր նշված, որ հանքավայրը կշահագործվի արդեն ծրագրի կազմման տարում և դրական նպաստում կունենա այդ տարվա տնտեսական աճին: Հաշվի առնելով

վերջին տարիներին նման կանխատեսումների պարբերաբար հետաձգվելու հանգամանքը՝ ավելի է հիմնավորվում Ծրագրի իրականացման նկատմամբ թերահավատությունը:

Ուշագրավ է, որ Ծրագրով ընթացիկ տարվա բյուջեի ծախսերի սպասվող մեծությունը նույնիսկ մի փոքր ավելին է, քան տարեկան հաստատված բյուջեով պլանավորված մեծությունը: Մինչդեռ հայտնի է, որ գործող կառավարության գործունեության տարիներին ձևավորվել է տխուր ավանդույթ՝ բյուջեի ծախսերը մշտապես թերակատարվում են: Վերջին հասանելի պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ 2026-ի 1-ին եռամսյակում բյուջեի ծախսերը թերակատարվել են 29.6%-ով: Այս պարագայում, ակնկալել, որ տարեվերջին բյուջեի փաստացի ծախսերը նույնիսկ գերազանցելու են բյուջեով պլանավորված մեծությունը, անհիմն լավատեսություն է: Իսկ եթե նույնիսկ ընթացիկ տարվա սպասվող մեծությունն է անիրատեսական, ինչպե՞ս կարող են վստահություն ներշնչել դրա հիման վրա առաջիկա երեք տարվա համար կատարված կանխատեսումները: Այս առումով ևս դրանց հիման վրա կառուցված միջնաժամկետ կանխատեսումների իրատեսականությունը խորը մտահոգությունների տեղիք է տալիս:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: